ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ.,
շ.1, Հեռ. (098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 97
04 ապրիլ 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 27-Ա - 36-Ա որոշումները, թիվ 15-19 կարգադրությունները և աշխատակազմի քարտուղարի թիվ 18-22 հրամանները:

Առդիր՝ 3 ֆայլ:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր՝ **Լ Ե Վ Ո Ն Զ Ա Վ Ա Ր Յ Ա Ն**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՄԱՐՏԻ 2017թվականի N 27-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ 10 ՇԵՆՔԻ 21 ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 5-րդ մասով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի <<գ>> ենթակետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման դրույթները, <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական վիճակի վերաբերյալ հատակագիծը և քաղ.Աշխեն Աշխարհբեկի Արզումանյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքի քաղաք Թումանյանի 7-րդ փողոցի 10 շենքի 21 բնակարանում ինքնակամ կառուցված 11,2 քմ մակերես շինությունը ճանաչել օրինական:

2.Ընդունել ի գիտություն, որ Թումանյան քաղաքի 7-րդ փողոցի 10 շենքի 21 բնակարանում ինքնակամ կառուցված 11,2 քմ մակերեսով շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ինքնակամ շինության օրինականացման համար Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին մուծել 3920 դրամ:
4. Թումանյանի շրջանի Թումանյան բանավանի 2-րդ մասի 7-րդ փողոցի տուն 19/21 բնակարանին, տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,քաղաք Թումանյան 7-րդ փողոց շենք 10 բն.21 :
5.Սույն որոշման 4-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՐՏԻ 2017թվականի N 28-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի,Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ.մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>>ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 13.03.2017թ. թիվ 101/107.4/1128-17 գրությունը,համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել հանձնաժողովի նախագահի տեղակալ Ե.Շաքարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

Հավելված 1
Թումանյան համայնքի ղեկավարի
2017թ. մարտի 27-ի թիվ 28-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Լ.Զավարյա - հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավար
Ե.Շաքարյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ, համայնքի ղեկավարի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ.

Ռ.Շահվերդյան - համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար
Ա.Մոսինյան - համայնքի ղեկավարի օգնական
Ն.Մկրտումյան - Քարինջ բնակավայրի վարչական ղեկավար
Ռ.Գալստյան - Մարց բնակավայրի վարչական ղեկավար
Հ.Սահակյան - Լորուտ բնակավայրի վարչական ղեկավար
Վ.Քառյան - Ահնիձոր բնակավայրի վարչական ղեկավար
Բ.Վանյան - Շամուտ բնակավայրի վարչական ղեկավար
Ռ.Հակոբյան - Աթան բնակավայրի վարչական ղեկավար
Ա.Ամիրջանյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ
Ա.Թադևոսյան - «Հրակայուն նյութերի գործարան» ԲԲԸ-ն տնօրեն
Ս.Վարոսյան - «Թումանյանի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն տնօրեն
Ա.Ռամազյան - Թումանյան քաղաքի միջնակարգ դպրոցի տնօրեն
Ս.Միքայելյան - «Հայփոստ» ՓԲԸ-ն Սպիտակի մ/ճ Թումանյանի 1712 ավագ օպերատոր
Մ.Պետրոսյան - «Ձաղիձոր Գազ» ՍՊԸ-ն տնօրեն
Ն.Թորոսյան - «Թումանյան քաղաքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ն տնօրեն
Գ.Պետրոսյան - ՀՀ «ՀԷՑ» ՓԲԸ-ն «Դեբեդ» մասնաճյուղի Թումանյանի մասնաճյուղի հսկիչ
Ս.Հովսեփյան - «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Լոռու գազամատակարարման և գազաֆիկացման Թումանյանի մասնաճյուղի հսկիչ
Հ.Կիրակոսյան - «Հայջրմուղկոյուղու» «Հյուսիս-Արևմտյան» տարածքային մասնաճյուղի «Ալավերդի» տեղամասի աշխատող
Հ.Գալստյան - ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի տեսուչ, մայոր
Ա.Շաքարյան - «ԱրմենՏել» ՓԲԸ հյուսիսային տարածքային կենտրոն ՅՇ Լոռու ուղղության էլեկտրոմանտյոր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված 2
Թումանյան համայնքի ղեկավարի
2017թ. մարտի 27-ի թիվ 28-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հանդիսանում է մշտապես գործող, արտակարգ իրավիճակներում բնակչության և համայնքի պաշտպանության խնդիրների լուծմամբ զբաղվող մարմին:

2. Հանձնաժողովն ապահովում է ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի բնակչության և օբյեկտների պաշտպանության համակարգի կայունությունը, կառավարման կառուցվածքի կատարելագործումը, խոշոր վթարների և արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու հետևանքների վերացմանն ուղղված ուժերի և միջոցների պատրաստականությունը:

3. Արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է համայնքի ղեկավարը, իսկ տեղակալը՝ համայնքի ղեկավարի տեղակալը:

4. Հանձնաժողովը համայնքի ղեկավարի կարգադրությամբ իրավունք ունի անցկացնել ստուգումներ և համայնքի տարածքի բոլոր օբյեկտներում իրականացնել վերահսկողական մեթոդական գործունեություն, կազմել ակտեր այդ օբյեկտների կողմից տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության համար ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

5. Հանձնաժողովի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են եռամսյակը մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:

6. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված այլ իրավական ակտերով:

7. Հանձնաժողովի որոշումները ենթակա են համայնքի ղեկավարի կողմից հաստատման և պարտադիր են համայնքի տարածքում գտնվող բոլոր ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների համար՝ անկախ նրանց գերատեսչական պատկանելությունից և սեփականության ձևից:

8. Արտակարգ իրավիճակների հանձնաժողովը՝

1) համակարգում է համայնքի տարածքում գտնվող կազմակերպությունների, հիմնարկների և ձեռնարկությունների գործունեությունը՝ արտակարգ իրավիճակներում գործելու, արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ.

2) մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու հետևանքների վերացմանն ուղղված ծրագրերի մշակմանը և իրականացմանը.

3) զանգվածային լրատվության և այլ միջոցներով արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության վիճակի և անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ բնակչությանն ապահովում է հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ.

4) ղեկավարում է բնակչության և կառավարման մարմինների պաշտոնատար անձանց արտակարգ իրավիճակներում գործելու պատրաստակամության բարձրացման գործընթացը.

5) կարող է ստեղծել արտաբյուջետային պահուստային հիմնադրամներ՝ ԱԻ կանխարգելման և հետևանքների վերացման, վթարավերականգնողական կազմավորումների ապահովման համար:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

9. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանությունը կանոնակարգող օրենքների և այլ նորմատիվային ակտերի կատարման կազմակերպումը.

2) արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների, նրանց հետևանքների նվազեցման, արտակարգ իրավիճակների պայմաններում պոտենցիալ վտանգավոր (քիմիական վտանգավոր, ճառագայթային վտանգավոր, հիդեհավտանգ, պայթյունավտանգ) օբյեկտների աշխատանքի հուսալիության ապահովման իրականացման միջոցառումների կազմակերպումը և հսկողությունը.

3) տարածքների և պոտենցիալ վտանգավոր օբյեկտների վիճակի հսկողության իրականացումը, արտակարգ իրավիճակների կանխատեսումը.

4) համայնքի տարածքում կառավարման մարմնի մշտական պատրաստականության կազմակերպումը.

5) արտակարգ իրավիճակների կանխատեսման, նրանց հետևանքների գնահատման և դրա հիման վրա արտակարգ իրավիճակների կանխարգելմանը, վնասի և կորուստների նվազեցմանը, բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մշակման և պլանավորման կազմակերպումը.

6) արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված գիտատեխնիկական ծրագրերի հետազոտման և համակարգման կազմակերպումը.

7) համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի, ուժերի և միջոցների պատրաստման կազմակերպումը, արտակարգ իրավիճակների առաջացման կամ սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության ձևերի և մեթոդների ուսուցանումը.

8) արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ որոշումների նախագծերի մշակումը.

9) մասնակցությունը համայնքի տարածքում պոտենցիալ վտանգավոր արտադրությունների տեղաբաշխմանը և գործունեության կազմակերպմանը վերաբերվող հարցերի քննարկմանը.

10) արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների անցկացմանը հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների ներգրավման աշխատանքների կազմակերպումը:

10. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) Տեխնածին, բնապահպանական և այլ աղետների առաջացման,

ճառագայթային, կենսաբանական, հիդրոօդերևութաբանական իրադրության վատթարացման սպառնալիքի դեպքում արտակարգ իրավիճակների հանձնաժողովը՝

ա. ստանձնում է տեղական արտակարգ իրավիճակների հանձնաժողովի գործունեության անմիջական ղեկավարումը.

բ. անհրաժեշտության դեպքում ձևավորում է օպերատիվ խմբեր՝ իրադրության վատթարացման պատճառների պարզաբանման և կարգավորելուն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով.

գ. ուժեղացնում է պոտենցիալ վտանգավոր օբյեկտներում վիճակի դիտարկումները և հսկողությունը, կանխատեսում է արտակարգ իրավիճակների առաջացման հավանականությունը և հետևանքները.

դ. միջոցներ է ձեռնարկում հնարավոր արտակարգ իրավիճակների վերացման համար նախատեսված ուժերի և միջոցների պատրաստականության բարձրացման և անհրաժեշտության դեպքում դրանց ենթադրվող գործողությունների շրջան առաջքաշման ուղղությամբ.

ե. ստեղծում է մամուլի խումբ հասարակայնության և զանգվածային լրատվության միջոցների հետ կապի ապահովման նպատակով.

2) Արտակարգ իրավիճակների առաջացման և հետևանքների վերացման դեպքում Հանձնաժողովը՝

ա. կազմակերպում է կառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների, ձեռնարկությունների և բնակչության ազդարարումն արտակարգ իրավիճակների մասին.

բ. աղետի գոտի է ուղարկում Հանձնաժողովի օպերատիվ խումբ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև շարժական կառավարման կետ.

գ. կազմակերպում է հասարակական կարգի պահպանությունը, մշակութային նյութական արժեքների պահպանությունը.

դ. կազմակերպում է կառավարման կետի ծավալումը, անհրաժեշտ ուժերի և միջոցների օպերատիվ ներգրավումը և դրանց արդյունավետ օգտագործումը աղետի գոտում.

ե. համակարգում է արտակարգ իրավիճակների հետևանքների բացահայտումը և գնահատումը, դրանց վերացումը, նյութատեխնիկական պահուստի և պաշարի նպատակահարմար օգտագործումը.

զ. կազմակերպում և համակարգում է աղետի գոտուց բնակչության տարահանման գործողությունները և տուժածներին անհրաժեշտ առաջնահերթ օգնության ցուցաբերումը.

է. կազմակերպում է կազմակերպություններից և քաղաքացիներից (այդ թվում նաև արտասահմանյան) որպես օգնություն աղետի գոտի մուտք գործող նյութական և ֆինանսական միջոցների հաշվառումը և բաշխումը.

ը. կազմակերպում է աղետի գոտու բնակչության անհետաձգելի բուժօգնությունը, հիգիենիկ-հակահամաճարակային և կենսապահովման միջոցառումների համակարգումը.

թ. մասնակցում է արտակարգ իրավիճակների պատճառների բացահայտմանն ուղղված պետական հանձնաժողովների աշխատանքին.

ժ. ապահովում է կառավարման մարմնի՝ ըստ զեկուցագրի սահմանված ձևի տեղեկացումը աղետի գոտում իրադրության ու աշխատանքների ընթացքի մասին և զանգվածային լրատվության միջոցներով տեղեկացնում է բնակչությանը.

ժա. իրականացնում է հսկողություն զանգվածային լրատվության միջոցներով արտակարգ իրավիճակների մասին տեղեկությունների տարածման ընթացքի նկատմամբ: Միջոցներ է ձեռնարկում կեղծ, չստացված, խուճապային լուրերի և հաղորդագրությունների տարածման արգելման ուղղությամբ:

11. Հանձնաժողովի իրավունքներն են.

1) Համայնքի տարածքում տեղաբաշխված կազմակերպությունների և ձեռնարկությունների առաջատար մասնագետներին ներգրավել պոտենցիալ վտանգավոր օբյեկտների նախագծերի փորձաքննությանը, օբյեկտների անվտանգության ապահովման հսկողությանը.

2) մասնակցել արտադրական օբյեկտների կառուցապատման, տեղաբաշխման սխեմաների ու նախագծերի, տնտեսական և սոցիալական զարգացման պլանների մշակմանն ու քննարկմանը.

3) սահմանված կարգով ներգրավել ուժեր ու միջոցներ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կատարման համար.

4) համայնքի ղեկավարին ներկայացնել առաջարկություն՝ արտակարգ իրավիճակների ծագման դեպքում համայնքի տարածքում գտնվող օբյեկտների (անկախ սեփականության ձևից) գործունեության դադարեցման մասին.

5) Հանձնաժողովի նիստում քննարկել և մարզպետին առաջարկություն ներկայացնել՝ անհրաժեշտության դեպքում հանրապետության այլ մարզերում ԱԻ հետևանքների վերացման աշխատանքներին կամ միջազգային օգնության ցուցաբերմանը Լոռու մարզից ուժերի և միջոցների հատկացման հարցը:

12. Արտակարգ իրավիճակների սպառնալիքի և առաջացման դեպքում Հանձնաժողովի իրավունքներն են՝

1) սահմանել համայնքի տարածքում կամ առանձին բնակավայրերում բնակչության պաշտպանության համակարգի աշխատանքային ռեժիմները.

2) ուժեղացնել աղետի գոտում հասարակական կարգի, խոշոր ֆինանսական և նյութական արժեքների կենտրոնացման վայրերի, բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտների պահպանությունը.

3) հատկացնել նյութական միջոցներ պահուստային հիմնապաշարներից՝ ԱԻ կանխարգելման և հետևանքների վերացման համար.

4) օգտագործել արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման համար նյութատեխնիկական, բժշկական, պարենային և այլ պաշարներ.

5) սահմանել կարանտին և այլ պարտադիր հիգիենիկ-հակահամաճարակային միջոցառումներ.

6) անհրաժեշտության դեպքում աղետի գոտում սահմանել ձեռնարկությունների և հիմնարկությունների, ինչպես նաև բնակչության կենսագործունեության հատուկ ռեժիմ.

7) տեղափոխել և պատրաստականության բերել համայնքի բնակչության պաշտպանության համակարգի կառավարման մարմինը և ուժերը:

3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

13. Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում համայնքի ղեկավարի տեղակալը,աշխատակազի ղեկավարը,բնակավայրերի վարչական ղեկավարները,համայնքի ղեկավարի օգնականը, աշխատակազմի մասնագետները,համայնքի բնակչության առաջնահերթ կենսապահովման հիմնարկների ղեկավարները և կազմակերպությունների աշխատակիցները:

14. Աշխատանքի ամենօրյա, ուժեղացված և արտակարգ ռեժիմների պայմաններում խնդիրների կատարման համար աշխատանքային մարմիններ են հանդիսանում՝

1) համայնքի փրկարարական խմբերը.
2) տարհանման հանձնաժողովը:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15. Հանձնաժողովի նախագահն անձնական պատասխանատվություն է կրում հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար, բաշխում և հաստատում է Հանձնաժողովի անդամների միջև պարտականությունների կատարումը:

16. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են աշխատանքային պլանների հիման վրա: Հանձնաժողովի նիստերը ձևակերպվում են արձանագրություններով:

17. Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում, կախված աղետի ընդգրկած ծավալից և բնույթից, ձևավորվում է շտաբ, որի վրա է դրվում ներգրավված կառավարման մարմնի, ուժերի և միջոցների ղեկավարումն աղետի գոտում:

18. Կախված ստեղծված կոնկրետ իրադրությունից, տեղական նշանակության ԱԻ-ի առաջացման դեպքում, հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի որոշմամբ անցնում է աշխատանքի «ուժեղացված» կամ «արտակարգ» ռեժիմի:

19. Հանձնաժողովի որոշմամբ արտակարգ իրավիճակների վերացմանը (անկախ գերատեսչական ենթակայությունից և առանց համաձայնեցնելու վերադաս ղեկավարության հետ) ներգրավվում են համայնքի տարածքում գտնվող՝ համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերը.

20. Կամավորական սկզբունքով արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը ներգրավվում են հասարակական կամավորական փրկարարական կազմավորումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ՉԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՐՏԻ 2017թվականի N 29-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության N 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակչուհի ԱՁ Հայկուշ Սարգսյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակչուհի ԱՁ Հայկուշ Սարգսյանին՝ 2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2017թվականի N 30-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՋ Լաուրա Վանյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՋ Լաուրա Վանյանին՝2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 31-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՁ Շահեն Մաղաքյանի հայտը.

31-Ա1.Թույլատրել Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՁ Շահեն Մաղաքյանին՝2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 32-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակչուհի ԱՁ Անահիտ Սահակյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակչուհի ԱՁ Անահիտ Սահակյանին՝2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 33-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՁ Արտյոմ Թորոսյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՁ Արտյոմ Թորոսյանին՝2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 34-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՁ Նաիրա Քոչարյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ ԱՁ Նաիրա Քոչայանին՝2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 35-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակչուհի ԱՋ Գայանե Սարգսյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակչուհի ԱՋ Գայանե Սարգսյանին՝ 2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 36-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակիչ ԱՁ Վարդան Հախվերդյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակիչ ԱՁ Վարդան Հախվերդյանին՝2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՄԱՐՏԻ 2017թվականի N 15

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով.

Ս/թ ապրիլի 1-ից անորոշ ժամկետով երկարաձգել Թումանյան համայնքի Աթան բնակավայրի վարչական ղեկավար Ռոլանտ Հակոբյանի աշխատանքային և լիակատար անհատական նյութական պատասխանատվության պայմանագրերը,հիմք՝ 27.03.2017թ. թիվ 3,4 պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՄԱՐՏԻ 2017թվականի N 16

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով.

Ս/թ ապրիլի 1-ից անորոշ ժամկետով երկարաձգել Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրի վարչական ղեկավար Հրաչյա Սահակյանի աշխատանքային և լիակատար անհատական նյութական պատասխանատվության պայմանագրերը,հիմք՝ 27.03.2017թ. թիվ 5,6 պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՄԱՐՏԻ 2017թվականի N 17

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով.

Ս/թ ապրիլի 1-ից անորոշ ժամկետով երկարաձգել Թումանյան համայնքի Մարց բնակավայրի վարչական ղեկավար Ռոբերտ Գալստյանի աշխատանքային և լիակատար անհատական նյութական պատասխանատվության պայմանագրերը,հիմք՝ 27.03.2017թ. թիվ 7,8 պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՄԱՐՏԻ 2017թվականի N 18

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՐԿԱՐԱԾԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով.

Ս/թ ապրիլի 1-ից անորոշ ժամկետով երկարաձգել Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրի վարչական ղեկավար Բաղիշ Վանյանի աշխատանքային և լիակատար անհատական նյութական պատասխանատվության պայմանագրերը,հիմք՝ 27.03.2017թ. թիվ 9,10պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՄԱՐՏԻ 2017թվականի N 19

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով.

Ս/թ ապրիլի 1-ից անորոշ ժամկետով երկարաձգել Թումանյան համայնքի Քարինջ բնակավայրի վարչական ղեկավար Նորիկ Մկրտումյանի աշխատանքային և լիակատար անհատական նյութական պատասխանատվության պայմանագրերը,հիմք՝ 27.03.2017թ. թիվ 11,12 պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

ՀՐԱՄԱՆ

09 ՄԱՐՏԻ 2017թվականի N 18

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով.

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝3.1-1) Էդգար Վլադիմիրի Վարդանյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

09 ՄԱՐՏԻ 2017թվականի N 19

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով.

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝3.2-1) Անահիտ Նորայրի Արզումանյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

ՀՐԱՄԱՆ

09 ՄԱՐՏԻ 2017թվականի N 20

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով.

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի երրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝3.3-3) Գայանե Արարատի Գալստյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

ՀՐԱՄԱՆ

09 ՄԱՐՏԻ 2017թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով.

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի երրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝3.3-4) Սուսաննա Ավագի Վարդանյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

09 ՄԱՐՏԻ 2017թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով.

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի երրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝3.3-8) Մարիամ Սարիբեկի Հովսեփյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ